№ 72 Ապրիլի 28 (Մայիսի 10) 1882 Ապրիլի 28 (Մայիսի 10) № 72

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական ժողովի առիթով։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սերբիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԾԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մեր գիւղական ազգաբնակութեան պէտքերը։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Ներկայ թուի օգոստոս ամսի կէսին լինելու է Թիֆլիսում ընդհանուր հայոց ուսուցչական ժողով։ Ռուսահայոց ամէն դպրոցներից կը հաւաքվեն ուսուցիչներ մեր քաղաքում, գուցէ կը դան մի քանի վարժապետներ և Թիւրքաց ու պարսից Հայաստանից։ Այդ բոլոր ուսուցիչների թուում շատ քիչեր կը լինեն, ի հարկէ, որոնք նիւթական միջոցներ կունենան իրանց հաշուով ճանապարհորդել, իրանց հաշուով Թիֆլիսում ապրել և կրկին իրանց հաշուով վերադառնալ իրանց քաղաքը կամ գիւղը։ Իսկ մեր վարժապետների մեծ մասը նիւթական միջոցներից զուրկ անձինք են։

Կան, ի հարկէ, հայ դպրոցների մէջ ուսուցիչներ, որոնք տարեկան հազար, հազար հինգ հարիւր ռուբլ ռոճիկ են ստանում,—մենք չենք խօսում ճեմարանի պրոֆէսօրների մասին, որոնք հինգ հազարներ են ստանում,—բայց կան և այնպիսի ուսուցիչներ, և որոնք անշուշտ մեծամասնութիւն են կազմում, որոնք տարեկան 300 ռուբլ, 200 ռուբլ և մինչև անգամ 150 ռուբլ են ստանում։ Սրանց համար ամենից հեշտաքրքիր կը լիներ գալ, ներկայանալ ուսուցչական ժողովին, մի բան սովորել ուսուցչական ժողովից։

Բայց կարո՞ղ են, արդեօք, այդ տեսակներ, գալ Թիֆլիս և ապրել այստեղ երկու շաբաթ իրանց հաշուով։ Կարծում ենք որ պատասխանը կարող է միայն բացասական լինել։

Սրանց պէտքերին, ուսուցչական ժողովը, անշուշտ, պիտի իր միջոցներից վճարի ճանապարհի ծախս և բացի սրանից նիւթական միջոց տայ նրանց և ուսուցչական ժողովի նիստերի տևողութեան ժամանակ, այսինքն երկու շաբաթվայ ընթացքում, Թիֆլիսում ապրելու։

Այս նպատակով է, անշուշտ, որ ուսուցչական ժողովի պատրաստական յանձնաժողովի նախագահ, բժշկապետ Շահպարոնեանց, աշխատում է դումար հաւաքել, յօգուտ լինելու ուսուցչական ժողովի, կօնցերտներ տալով և դասախօսութիւններ կարդացրելով։

Բայց հաւատացած լինելով որ այս միջոցներով հաղիւ թէ կը հաւաքվի այնպիսի դումար, որով կարելի լինէր բոլոր չքաւոր ուսուցիչների թէ ճանապարհածախսը վճարել, թէ նրանց պահել Թիֆլիսում երկու շաբաթ շարունակ, մենք կառաջարկենք մեր հասարակութեանը այնպիսի մի միջոց, որ գործ է դրվում այդ տեսակ դէպքերում բոլոր բարեկարգ երկիրներում, մանաւանդ Գերմանիայում։ Մի որ և է ժողովի, մանաւանդ ուսուցչական ժողովի ժամանակ, քաղաքի բնակիչներից իւրաքանչիւրը, որոնք հետաքրքրվում են գործով, յանձն են առնում ժողովի տևողութեան ժամանակ մի մի ուսուցիչ բնակեցնել իրանց տանը։ Ով որ միջոց և աւելորդ սենեակ ունի, յայտնում է իր պատրաստականութիւնը երկու ուսուցիչ ընդունելու, մի այլ բնակիչ յայտնում է որ իր միջոցները ներում են միմիայն մի ուսուցիչ ընդունելու, մի այլ բնակիչ յայտնում է որ իր միջոցները ներում են միմիայն մի ուսուցիչ ընդունելու և այն էլ գիւղական ուսուցիչ որ, ի հարկէ, պակաս պահանջող է, քան քաղաքային դպրոցի մի ուսուցիչ և այլն։

Ահա եթէ մենք էլ գործ դնէինք այդ տեսակ միջոց, այն ժամանակ յանձնաժողովի ձեռքում հաւաքված դումարը գործ կը դրվէր միմիայն ամենաաղքատ վարժապետների ճանապարհի ծախսը վճարելու, իսկ ուսուցիչների ապրելը քաղաքում, երկու շաբաթ ժամանակ, ժողովին ոչինչ չէր նստի։

Սրան հարկաւոր ենք համարում աւելացնել որ „Մշակի“ խմբագրութիւնը պատրաստ է իր կողմից ընդունել մի ուսուցիչ, որ կը ստանայ բնակարան և ճաշ ժողովի տևողութիւն ժամանակ, նոյն պատրաստականութիւնը յայտնեցին մեզ արդէն և պ. Ա. Ամիրխանեանց և պ. Բաֆֆի։

Ցոյս ունենք որ Թիֆլիսում կը գտնվեն և շատ ուրիշներ, որոնք կընդունեն մեր այդ առաջարկութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ

Ապրիլի 20-ին

Այստեղի կանանցից կազմված «Որբանոցամ ընկերութիւնը» կամաց կամաց, բայց հաստատ քայլերով առաջ է գնում և ամենայն սրբութեամբ ծառայում իր նպատակին։

Այս ընկերութեան մասին «Մշակում» հրատարակված լուրերն ու նամակները շատ տեղեր արձագանք գտան, շատերի ջերմ համակրութիւնը գրգռեց դէպի մեր սկսած նորաբոյս ընկերութիւնը և նրա հովանաւորութեան տակ ձրի դաստիարակվող թշուառ և որբ օրիորդները, որոնք ամեն րոպէ անմուռունչ աղօթում են իրանց բարերարուհիների համար։

Հին-Նախիջևանցի տ. Մարգարիտ Պետրոսեանց, դարսեցի տ. Նազանի Տէր-Մելքիսեդեկեանց, ալէքսանդրապոլցի Շողակար խանում Տիգրանեանց, տիկին Հռիփսիմէ Բաբայեանց, տ. Աղրիանա Կոստանեանց և օրիորդաց դպրոցի վարժուհի տ. Աշխէն Տէր-Սարգսեանց, ամենայն յարգանօք յայտնել են իրանց պատրաստականութիւնը մեր ընկերութեան մէջ մտնելու։ Մենք ամենայն ուրախութեամբ և գրկաբաց ընդունելով յիշեալ բարեսիրտ տիկիններին, իսկոյն գրեցինք նրանց առանձնաբար մատեանում և ահա հրապարակում իմ ջերմ շնորհակալութիւնը նուիրում եմ իմ սիրելի քոյրիկներիս։

Առանձին շնորհակալութեան արժանի է տեղոյս ոստիկան պ. Փիրումեանցի ամուսին տ. Լուսնթագ Փիրումեանցը որ իր ծանօթ կանանց բարեկամների և օտարազգի կանանց դիմելով, յօգուտ մեր ընկերութեան, ստորագրութեամբ հաւաքեց 120 ռուբլ և անցեալ օրը յանձնեց մեզ։ Անչափ շնորհակալ ենք, ինչպէս տ. Լուսնթագից, այնպէս էլ նուիրատուներից։

Ամենայն ուշադրութեան արժանի է պ. Վանս Եղշատեանցի դէպի մեր ընկերութիւնը ցոյց տուած մի օրինակելի բարեգործութիւնը, որի նմանը մինչև ցայսօր Ղարաքիլիսում չէ պատահել։ յիշեալ Եղշատեանցի սիրելի եղբայրը, որ իր օրինակելի վարք ու բարքով գրաւել էր բոլոր հասարակութեան ուշը, ծաղիկ հասակում կնքեց իր երկրաւոր կեանքը։ Պ. Վանսն իր սիրելի հանգուցեալ յիշատակը անջնջելի պահպանելու համար 25 ր. նուիրեց մեր ընկերութեան, որի համար ես իմ չքաւոր որբուհիներիս հետ միշտ մաղթելու ենք Արարչից հանգուցեալի համար հանդիստ արքայութիւն, իսկ պ. Եղշատեանցի ամբողջ դերդաստան համար շատ և շատ երջանիկ օրեր։—Երանի թէ Ղարաքիլիսի հասարակութիւնը օրինակ առներ պ. Եղշատեանցից, և փոխանակ՝ քելեխների վրա ավելորդ շռայլ ծախսեր անելու, խնայողաբար վարվէին և իրանց փողերը ավելի սուրբ նպատակների ծառայեցնէին։

Փեփրոնիա Տէր-Մելքիսեդեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ, ապրիլի 24-ին կայացան Արծրունու թատրօնում առաջին երկու դասախօսութիւնները յօգուտ Թիֆլիսում այս ամառը լինելու հայոց ընդհանուր ուսուցչական ժողովի։ Պ. Արիստոդոմ Յովաննիսեան կարդաց «Ուսուցչական ժողովի նշանակութեան» մասին։ Նրա դասախօսութիւնը շատ լաւ էր կազմված և լաւ էլ կարդացվեցաւ։ Պ. Ալէքսանդր Երիցեան կարդաց «Բարեգործութեան վրա հայերի մէջ»։ Պ. Երիցեան կը շարունակի իր դասախօսութիւնը հետևեալ շաբաթ օր։ Դասախօսները վարձատրվեցան հասարակութեան կողմից ջերմ ծափահարութիւններով։

—

Կիրակի, ապրիլի 25-ին նախկին Խալիպեան դպրոցի աշակերտների կարգադրութեամբ կատարվեցաւ Թիֆլիսի Վանքի մայր-եկեղեցում Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազովսկու հոգեհանդիստը։ Յայտնի է որ հանգուցեալը կառավարիչ էր Խալիպեան դպրոցի։ Գաբրիէլ արքեպիսկոպոսը թաղված է Վանքի դաւթում։ Հանգուցեալի գերեզմանի վրա խօսեցին ճառեր նրա աշակերտներից՝ Բժիշկ Մելիք-Բեղլարեանց, պ. Դ. Քալանթարեանց և քահանայ Սրսէն Բագրատունի։

—

Իմացանք թէ Թիֆլիսի բազմանայի վաճառականները վրդովվել են «Մշակի» մէջ տպված լուրից, թէ պարոնները հաւաքել են իրանց մէջ 1000 ռուբլ դումարը, որ պէտք է գործ դնէին քէֆի վրա։ Չենք հասկանում թէ ինչի են վրդովվում մեր պ. պ. վաճառականները։ միթէ կարծում կողմից մեր գիւղացիների կատարեալ անշարժութեան և յետադիմութեան պատճառները։

Զը նայելով մեր երկրի Անդրկովկասի բնական անսպառելի հարստութիւններին, չը նայելով, որ բնութիւնը Անդրկովկասում ամեն կերպ նպաստում է ժողովրդի ապահովութեան, եթէ միայն բնական այդ գեղեցիկ յարմարութիւնների հետ միանար և արհեստականը, մեր գիւղացին, գիւղական ողջ ազգաբնակութիւնը, համարեա առանց բացառութեան, ներկայացնում է տնտեսական վիճակի ամենավատթար քայքայումն և նիւթական անապահովութիւն։—Երկրագործութիւնը, որ իսկապէս մեր երկրի գլխաւոր արդիւնաբերութեան աղբիւրը պիտի լինի, ներկայումս ամենախեղճ դրութեան մէջ է և կատարելապէս ընկնելու վրա.... Կովկասում սով է լինում. մենք ստիպված ենք մեր ուտելու հացը՝ առաջին անհրաժեշտ պիտոյը, Ռուսաստանից ու մինչև անգամ Ամերիկայից բերել տալ. մինչդեռ եթէ միմիայն Երևանի նահանգը կանոնաւոր կերպով մշակվէր, կարող պիտի լինէր ամբողջ Կովկասին բաւականութիւն տալ։—Կաթնային տնտեսութիւնը և գիւղատնտեսութեան միւս ճիւղերը նոյնպէս ոչինչ մխիթարական բան չեն ներկայացնում, մի խօսքով մեր գիւղական ազգաբնակութեան տնտեսական դրութիւնը ամեն կողմից ներկայացնում է մեզ մի հոգեպարգ մարմին, ճնշված զառն ցաւերի տակ։ Ի՞նչ է սրա պատճառը, կը հարցնի ամեն մէկը մեզնից։—մենք կը պատասխանենք. պատճառը շատ պարզ և ամենքիս հասկանալի է, ափսոս, որ մենք էլի մեր բնական սառնասրտութեամբ ու անտարբերութեամբ սպասում ենք, որ բանը բանից անցնի, ինչպէս ասում են. «դանակը ոսկրին հասնի», այն ժամանակ մենք գուցէ կը սկսենք գործել, բայց արդէն ուշ կը լինի... Ինչ անի երկրագործ գիւղացին, երբ իր հին նահապետական երկրագործական միջոցներով, արիւնքրտինք թափելով աշխատում է և փոխանակ օգուտ քաղելու վնաս է կրում, որովհետև նրա միջոցները հին են, նահապետական, նա ծանօթ չէ, միջոց չունի ձեռք բերելու աշխատանքը թեթևացնող նոյն զօրութեամբ, քիչ աշխատանքով նոյն պաչտօնը կատարող մեքենաները։

Դեռ այդ բաւական չէ. իր այդքան զժուարութեամբ ձեռք բերած արդիւնաբերութիւնը նա միջոց չունի, անկարող է վաճառահանել. նրա արտերի ցորենը իր ընտանիքին բաւականութիւն տալուց աւելի բան չէ կարող անել, պէտք է ամբարվի ու փտի. նրա այգիների գինին տեղական պահանջին բաւականութիւն տալուց աւելի բանի պէտք չէ (իսկ այդ պահանջը շատ փոքր է) պէտք է քացախի. նրա բանջարանոցի բազմատեսակ արդիւնաբերութիւնները նոյն վիճակին պիտի ենթարկվեն, պէտք է նեխվեն, որովհետև պահանջ չը կայ, որովհետև երկրագործ գիւղական ազգաբնակութիւնը միջոց չունի վաճառահանելու իր արդիւնաբերութիւնները, որովհետև փոքր ի շատէ կանոնաւոր ճանապարհներ չը կան, հաղորդակցութիւնը ուրիշ երկրների հետ խղված է.... Ահա այս հանգամանքները ստիպում են երկրագործ դասին հետզհետէ թողնել իր պարապմունքը կամ մշակել այնքան, որ բաւականանայ միայն իր ընտանիքին, տեղական պահանջներին։

Մեր հարուստ վաճառականների մտքովն անգամ չէ անցել մտածել մեր երկրի երկրագործ դասի, աշխատող ձեռքերի վիճակը թեթևացնելու վրա։ Գոնէ այդ վաճառականները իրանց եսական շահերի տեսակէտից էլ պէտք է ուշադրութիւն դարձնէին երկրագործների դրութեան վրա, որովհետև դրանից իրանք ահագին շահ կամ վնաս կարող են ունենալ։ Թող փորձեն մեր հարուստ դրամատէրերը կամ իրանց ամուսնական միջոցներով կամ ընկերութեամբ հոգալ երկրագործ դասի վրա, զանազան վաճառականական պայմաններով կապվեն այդ դասի հետ, սովորեցնեն նը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԳԻՒՂԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԵՐԸ

Օր չէ անցնում որ մենք չը լսենք զանազան դանգատներ մեր գաւառական քաղաքների, գլխաւորապէս բազմաթիւ գիւղերի ազգաբնակութեան վատթար վիճակի վրա։—Այդ դանգատները մեզանում այնքան սովորական, այնքան բնական են դարձել, որ ոչ ոք նրանց վրա առանձին ուշադրութիւն չէ դարձնում, մեր ժողովրդի ստորին մասի՝ գիւղացիների դրութիւնը ոչ ոքին չէ հետաքրքրում։—Այդ դանգատները համարեա չարունակ երևում են մեր լրագիրներում, բայց մինչև այժմ ոչ ոք գաւառական թղթակիցներից չը բացատրեց մեզ այդ հանելուկը՝ այդ անվերջ դանգատների պատճառը։ Ծանօթ լինելով փոքր ի շատէ գաւառական քաղաքների և մանաւանդ գիւղական ազգաբնակութեան կեցութեան հետ, մենք պարտք ենք համարում մեր կարողութեան չափ փորձել բացատրել մի կողմից այդ դանգատների, իսկ միւս կողմից մեր գիւղացիների կատարեալ անշարժութեան և յետադիմութեան պատճառները։

Զը նայելով մեր երկրի՝ Անդրկովկասի բնական անսպառելի հարստութիւններին, չը նայելով, որ բնութիւնը Անդրկովկասում ամեն կերպ նպաստում է ժողովրդի ապահովութեան, եթէ միայն բնական այդ գեղեցիկ յարմարութիւնների հետ միանար և արհեստականը, մեր գիւղացին, գիւղական ողջ ազգաբնակութիւնը, համարեա առանց բացառութեան, ներկայացնում է տնտեսական վիճակի ամենավատթար քայքայումն և նիւթական անապահովութիւն։—Երկրագործութիւնը, որ իսկապէս մեր երկրի գլխաւոր արդիւնաբերութեան աղբիւրը պիտի լինի, ներկայումս ամենախեղճ դրութեան մէջ է և կատարելապէս ընկնելու վրա.... Կովկասում սով է լինում. մենք ստիպված ենք մեր ուտելու հացը՝ առաջին անհրաժեշտ պիտոյը, Ռուսաստանից ու մինչև անգամ Ամերիկայից բերել տալ. մինչդեռ եթէ միմիայն Երևանի նահանգը կանոնաւոր կերպով մշակվէր, կարող պիտի լինէր ամբողջ Կովկասին բաւականութիւն տալ։—Կաթնային տնտեսութիւնը և գիւղատնտեսութեան միւս ճիւղերը նոյնպէս ոչինչ մխիթարական բան չեն ներկայացնում, մի խօսքով մեր գիւղական ազգաբնակութեան տնտեսական դրութիւնը ամեն կողմից ներկայացնում է մեզ մի հոգեպարգ մարմին, ճնշված զառն ցաւերի տակ։ Ի՞նչ է սրա պատճառը, կը հարցնի ամեն մէկը մեզնից։—մենք կը պատասխանենք. պատճառը շատ պարզ և ամենքիս հասկանալի է, ափսոս, որ մենք էլի մեր բնական սառնասրտութեամբ ու անտարբերութեամբ սպասում ենք, որ բանը բանից անցնի, ինչպէս ասում են. «դանակը ոսկրին հասնի», այն ժամանակ մենք գուցէ կը սկսենք գործել, բայց արդէն ուշ կը լինի... Ինչ անի երկրագործ գիւղացին, երբ իր հին նահապետական երկրագործական միջոցներով, արիւնքրտինք թափելով աշխատում է և փոխանակ օգուտ քաղելու վնաս է կրում, որովհետև նրա միջոցները հին են, նահապետական, նա ծանօթ չէ, միջոց չունի ձեռք բերելու աշխատանքը թեթևացնող նոյն զօրութեամբ, քիչ աշխատանքով նոյն պաչտօնը կատարող մեքենաները։

Դեռ այդ բաւական չէ. իր այդքան զժուարութեամբ ձեռք բերած արդիւնաբերութիւնը նա միջոց չունի, անկարող է վաճառահանել. նրա արտերի ցորենը իր ընտանիքին բաւականութիւն տալուց աւելի բան չէ կարող անել, պէտք է ամբարվի ու փտի. նրա այգիների գինին տեղական պահանջին բաւականութիւն տալուց աւելի բանի

ծում էին թէ մենք կարող ենք համակրել փողի անսպատակ ծախսելուն, անսպատակ քէֆին։ Մենք մինչև անդամ քէֆի դէմ էլ չենք, բայց շատ կուզենայինք տեսնել որ մեր հասարակութիւնը, ամեն քաղաքակիրթ հասարակութեան նըման, քէֆի հետ էլ միացներ մի որ և է բարոյական գաղափար։ Կարծում ենք որ մեր այդ ցանկութիւնը դատապարտելի չէ։

—

ԶԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են որ այդտեղի վաճառականները գանգատվում են թէ փօստաների մէջ անկարգութիւն է լինում. նամակները կանոնաւոր կերպով չեն հասնում իրանց նշանակված տեղը։

—

Մեզ մօտ եղած 192 բուրլ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդական փողից այսօր ուղարկեցինք փօստով յիշեալ խմբագրութեանը 100 բուրլ, ուրեմն մեզ մօտ մնում է այժմ 92 բուրլ։

—

ԲԱԳՈՒԻ մեր մշական թղթակիցը մեզ գրում է հետևեալը։ «Ապրիլի 18-ին ժամանեց այստեղ Կովկասեան գլխաւոր կառավարչապետ, իշխան Դոնդուկով-Կորսակով։ Նրան ընդունեցին երկաթուղու կայարանում, ըստ սովորութեան, աղ ու հաց ներկայացնելով։ Քաղաքիս զուման վճռած էր ամենայն չքեղութեամբ ընդունել իշխանին։ Քաղաքը զարդարված էր դրօշակներով։ Իշխանը այցելեց այստեղ, ի միջի այլոց, և հայոց եկեղեցին և Մարդասիրական ընկերութեան ուսումնարանը։ Ապրիլի 19-ին իշխանը գնաց Բալախան և Սուրախան։ Սև քաղաքում նա գնաց Նոբէլի և Միրզոևի գործարանները նայելու, վերադառնալով այնտեղից ժամը 10-ին։ Իշխանը դիմելով տեղական թուրք ներկայացուցիչներին, ասեց նրանց որ կամելով տեղական բնակիչների նշանաւոր մի մեծամասնութիւն, չը պէտք է այնքան անհոգ լինեն դէպի իրանց բնակեցրած թաղի, միջին քաղաքի, տների ու փողոցների անմաքրութիւնը։ Եւ ճշմարիտ, այդ թաղը յայտնի է իր անմաքրութեամբ, թոզով, ցեխով և զարշահոտութիւններով։ Այսօր, ապրիլի 21-ին իշխան Դոնդուկով-Կորսակովին քաղաքը մի պարահանդէս պիտի տայ, տեղիս քաղաքային պարտիզում։ Այնուհետև իշխանը կուղևորվի դէպի Կրասնովոդսկ։ Երէկ հասաւ այստեղ Բաքուի նոր նահանգապետը։»

—

Մենք խմացանք որ Թիֆլիսի Նորաշէնի Ս. Մարիամեան օրիորդական դպրոցի տեսուչ, պ. Ա. Զաշիտեանց կատարելապէս անհամապատասխան է իր ստանձնած պաշտօնին։ Դպրոցը շատ վատ դրութեան մէջ է, խռովութիւնների, երկպառակութիւնների, խմբիդաների վերջ չը կայ։ Քիչ շատ օրինաւոր ուսուցչական ոյժերը հեռացել են դպրոցից։ Տեսուչը յարուցեց իր դէմ կատարեալ ատելութիւն և զղուանք թէ վարժապետների, թէ վարժուհիների և թէ աշակերտուհիների կողմից։ Այդ տեսչին, ինչպէս ասում են, հովանաւորում է դպրոցի հոգաբարձութիւնը, որ ուսուցիչներից կոյր հնազանդութիւն է պահանջում դէպի այդ նախաջրհեղեղեան տեսուչը։ Ասում են պ. Զաշիտեան միացրել է դպրոցը մի տեսակ գրասենեակի հետ, որտեղ գալիս են խառնիճաղանճ արհեստաւորներ, որոնց պարոնը տոկոսով փող է տալիս։ Այդ վերջին լուրը այն աստիճան հրէշաւոր է, որ մենք հրաժարվում ենք նրան հաւատալուց։ Իսկ ինչ որ վերաբերվում է պ. Զաշիտեանի ընդունակութիւններին և հմտութիւններին, մենք անձամբ նրան ճանաչելով, կարող ենք վկայել որ իր մըտաւոր զարգացման կողմից, ի հարկէ, նա արժանի չէ մի զպլոց կառավարելու։ Առհասարակ Նորաշէնի Մարիամեան ուսումնարանը հետզհետէ ընկնում է։ Դա շատ ցաւալի է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Անցեալ նամակով ևս ձեզ հաղորդեցի, որ Թագաւոր Միլան մտադիր էր այցելել Սերբիայի ներքին գաւառները, գրում է Բելգրադից „Голосъ“ լրագրի թղթակիցը ապրիլի 8-ից։ Այսօր այդ մտադրութիւնը իրագործվեցաւ և Թագաւորը սկսեց իր ճանապարհորդութիւնը։ Թագաւորին ուղեկցում են Թագուհին, Թագաժառանգը և բոլոր մինիստրները։

Թագաւորի ճանապարհորդութիւնը այս անդամ մեծ նշանակութիւն ունի։ Մինչև ընդդիմադրական պատգամաւորների հրաժարականը ոչ ոք չէր խօսում Թագաւորի ճանապարհորդութեան մասին, իսկ երբ ընդդիմադրական կուսակցութիւնը հրաժարվեց և մինիստրութիւնը նկատեց, թէ իր դրութիւնը հաստատ չէ, նա կամեցաւ իրագործել Թագաւորի այդ ճանապարհորդութիւնը իր հեղինակութիւնը վերականգնելու համար։ Ճանապարհորդութեան նպատակը հասկացվեցաւ և ընդդիմադրական բոլոր լրագիրները դեռ Թագաւորի ուղևորվելուց առաջ աշխատում էին զգուշացնել Թագաւորին ընտրողական ցոյցին մասնակցելուց։ Նրանք յիշեցնում էին որ Միլան, սահմանադրութեան համեմատ ամեն տեսակ պատասխանատուութենից ազատ լինելով, չէ կարող միջամտել որ և է կուսակցութեան գործերին։ „Самоуправа“ լրագիրը այդ առիթով գրեց հետևեալը։ „Շուտով Թագաւորը կուղևորվի Սերբիայի ներքին գաւառները և այդ առիթով առաջադիմները յայտնում են, թէ Թագաւորի ճանապարհորդութիւնը նրանց համար նպաստաւոր է և կատարվում է նրանց օգնելու համար։ Եղբայրներ՝ գիւղացիք, քաղաքացիք, արհեստաւորներ և բանւորներ, մի թոյլ տաք, որ պօլիցիան ընտրէ այն պատգամաւորութիւնները, որոնք պէտք է ներկայանան Թագաւորին, այլ ընտրեցէք ինքներդ ձեր հաւատարիմներին, որոնց դիրքը ամենապատուաւոր և ազատասէր մարդկերանց։ Ուղարկեցէք նրանց Թագաւորի մօտ և յանձնեցէք, որ նրանք առանց կողմնապահութեան յայտնեն ձեր բոլոր պէտքերը։ Իսկ եթէ պօլիցիան կարդելէ ձեզ այդպէս վարվել, այն ժամանակ բարձրացէք ամենքդ, դիմաւորեցէք ձեր Թագաւորին, շնորհաւորեցէք նրա գալուստը և համարձակ պատմեցէք նրան ձեր ունեցած բոլոր ցաւերը։“

Մի ուրիշ լրագիր դեռ Թագաւորի գնալուց առաջ զգուշացրեց Թագաւորին և մինիստրներին, յայտնելով, թէ կառավարութեան ընտրած միջոցը վտանգաւոր է առհասարակ իւրաքանչիւր սահմանադրական պետութեան մէջ և մանաւանդ Սերբիայում։ Ի միջի այլոց լրագիրը ասում է. „Մինիստրութիւնը կարծում է, որ այն սիւնը, որի վրա ինքը յենված է, չափազանց ամուր է և նրա օգնութեամբ կարող է դուրս գալ իր դժուար դրութենից։ Նա այնքան ինքնահաւանութեամբ յենվում է այդ սիւնի վրա, որ չէ մտածում, թէ նրա հետ միասին կարող է յանկարծակի ընկնել։ Ցեսնելով դրամատիկական այդ խաղը, մենք համոզված ենք, որ նրա վերջը ողբերգական կը լինի։ Այդ հանգամանքը անհանգիստ չը պէտք է անէ ժողովրդի իսկական բարեկամներին։ Մինիստրութիւնը պէտք է չը մոռանայ, թէ ինչպիսի վախճան են ունեցել այն բոլոր կառավարութիւնները, որոնք այդպիսի խաղ են սկսել։ Թող նա մտաբերէ, որ այդպիսի խաղերը միշտ դուշակել են նշանաւոր անցքեր, որոնց հետևանքը ժողովրդի համար եղել է կամ ստրկութիւն, կամ աւելի ընդարձակ ազատութիւն, քան թէ նա առաջ վայելում էր։“

Վերջը լրագիրը հասնում է այն եզրակացութեան, որ մինիստրութիւնը Բոլգարիայի նման պետական յեղափոխութիւն է նախապատրաստում։

ՖՐԱՆՍԻԱ

—

Քաղաքական ճառերի արտասանելը գեներալների կողմից սովորութիւն է դարձել, գրում է „Голосъ“։ Մեզ հեռագրեցին Փարիզից, որ գեներալ Գալիֆէ ճաշի ժամանակ մի ճառ արտասանեց, որով մեղադրում էր Ֆրէյսինէի մինիստրութեանը, թէ նա արտաքին յարաբերութիւնների ժամանակ չէ կարողանում պաշտպանել Ֆրանսիայի արժանաւորութիւնը։ Գեներալ Գալիֆէ մի անեբևակայելի պատմութիւն պատմեց, իբր թէ գերմանական դեսպանը Փարիզի մէջ, իշխան Հօհենլօհէ, աշխատում է Ֆրանսիայի հետ մի դաշնագիր կապել, որի համեմատ Գերմանիան պէտք է ապահովէ Ֆրանսիայի ամբողջութիւնը Եւրօպայում և Աֆրիկայում, իսկ Ֆրանսիան իր կողմից պէտք է պարտաւորվի փոքրացնել իր զօրքերի թիւը և ոչ մի դաշնակցութիւն չը կապի մի ուրիշ մեծ պետութեան հետ։ Ճառախօսը աւելացրեց, որ նա այդ տեղեկութիւնը ստացել է Գամբետտայից և կարծիք յայտնեց, թէ անհրաժեշտ է Ֆրանսիայի կառավարութիւնը նորից յանձնել պետական այդ մարդուն։

Ամբողջ այս պատմութիւնը չափազանց օտարոտի և մինչև անդամ ծիծաղելի է։ Ճշմարիտ է, Ֆրէյսինէի մինիստրութեան արտաքին քաղաքականութիւնը շատ փայլուն չէ, բայց այնու ամենայնիւ նա այնքան կոյր չէ, որ չը նկատի քաղաքական այն սըխալը, որ առաջ կը դայ իշխան Հօհենլօհէի հետ բանակցութիւններ սկսելուց այն հիմունքների վրա, որոնց հաղորդեց մեր ստացած հեռագիրը։ Իր եւրօպական և աֆրիկական կալուածների ամբողջութեան ապահովութիւնը Գերմանիայից ընդունելը մեծ ստորութիւն կը լինի Ֆրանսիայի համար, մանաւանդ եթէ այդ ապահովութիւնը ըստացվի Ֆրանսիական զօրքերի թիւի փոքրացնելու դնով։ Այդպիսի պայմանները ընդունելով, երրորդ հանրապետութիւնը կախված կը լիներ Գերմանիայից, որովհետև կը զրկվեր միջոցներից պատժել Գերմանիային ստորագրված դաշնագիրը խախտելու համար։ Այդպիսի դաշնագրի ստորագրելը չի յանձն առնի Ֆրանսիական ոչ մի մինիստր, որքան էլ նա անընդունակ և կարճատես լինի, իսկ իշխան Հօհենլօհէ անկասկած չէր համարձակվի այդպիսի առաջարկութիւն անել Ֆրէյսինէին։

Եթէ ճշմարիտ գեներալ Գալիֆէ իր պատմած պատմութիւնը լսել է Գամբետտայից, պէտք է կարծել, որ նախկին մինիստր-նախագահը կամեցել է գրգռել տաք և քաջ գեներալին այժմեան մինիստրութեան դէմ աւելի ուռանդով մաքառելու համար։ Գեներալ Գալիֆէի նման մարդկերանց գրգռելու համար բաւական չեն վերացական մտքեր, օրինակ այնպիսի մի վտանգի մասին, որ սպառնում է Ֆրանսիային այժմեան մինիստրութեան չափազանց մեծ հակակրութենից միջամտել եւրօպական գործերին։ Նրանց շօշափելի օրինակներ են հարկաւոր ցոյց տալու համար, թէ ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ այդպիսի անսահման խաղաղասիրութիւնը։

բանց երկրագործութեան, գիւղատնտեսութեան աւելի նոր, արդիւնաւոր ձևը, տան նրանց նոր ձևով չինված մեքենաներ, չինեն կանոնաւոր ճանապարհներ, որոնցով կարելի կը լինէր այդ արդիւնաբերութիւնները վաճառանել։

Թող մեր կապիտալիստները, նպաստաւոր պայմաններով, երկրի մէջ, որտեղ ջրի սակաւութիւն է զգացվում, ջրանցքներ չինել տան։ Ինչու Կախանովը, Շանգիրէյը և ուրիշներ կարող են այդ անել և երկրի հարստութիւնը իրանց ձեռքը ձգել, իսկ մենք այդ անել չենք կարող։ Մեր վաճառականները զանգատվում են թէ առուտուրը դանդաղ է ընթանում, օգուտ չը կայ. այսպիսի պայմաններում ինչ կարծիք, որ չի լինի, քանի որ վաճառականների, կապիտալիստների միջոցները անօգուտ կանցնեն երկրի աղքատութեան և իրանց համար։—Թող նրանք մտածեն երկրի մէջ զանազան յարմար կէտերում հիմնեն գործարաններ։ Ինչու մեր բոժոժը, բամբակը ուղարկենք արտասահման, քանի որ ինքներս միջոց ունենք անելու նոյնը։

Մենք այս բառերի վրա մտածելու հեռատեսութիւնը չունենք, մենք ընդունակ ենք միայն միջնորդների դեր կատարելու, այն ինչ օրից օր մեր երկրում աւելանում են օտարականներ և հեռատեսութեամբ այժմեանից իրանց ձեռքն են դցում այդ արդիւնաւոր պարապմունքները ու սպառնում են ապագայում խեղդել մեր երկրի վաճառականութիւնը, ուրեմն և մեզ....

II

Միւս գանգատները, որոնք վերաբերում են մեր ժողովրդի ստորին դասի ագիտութեան, անտարբեր անշարժութեան, նոյնպէս ունեն իրանց յարգելի պատճառները և այդ բանում մեղաւոր է ոչ թէ գիւղական աղքատութիւնը, այլ մեղաւոր է մեր ինտելիգենցիան։—Գիւղական աղքատութիւնը, որին մենք պարտական ենք մեր հասարակական կեանքում, համարեա բոլոր, գործիչներով, բոլորովին զրկված է, փոքր 'ի շատէ հասկացող, գործիչներից։ Մեր երիտասարդութիւնը խորշում է գիւղերից, գաւառներից, բոլորն էլ ձգտում են դէպի բարձր, դէպի կենտրոն։

Գիւղացին հազար ու մի չարչարանքով իր որդուն ուղարկում է կենտրոնի բարձր կամ միջնակարգ ուսումնարանները, յուսալով, որ վերջը նա պէտք է օգտակար լինի իրան, իր ընտանիքին, իր հասարակութեան, բայց հակառակն է դուրս գալիս.—այդ պարոնները բոլորովին իրանց մոռանում են և գործունէութեան ասպարէզ են փնտռում կենտրոններում, մեծ քաղաքներում, իսկ գիւղական ազգաբնակութիւնը մնում է դարձեալ նոյնը։—Մեր գիւղերում կամ ուսումնարաններ բոլորովին չը կան, կամ եթէ կան, ոչինչ դրական օգուտ չեն տալիս, այլ շատ տեղեր էլ ժողովուրդը աւելի անբարոյականացնում են, որովհետև գիւղացին ուսուցիչ և ուսումնարան չը գիտէ զանազանել.—եթէ ուսուցիչը մի գայթակղութեան առիթ տուեց, այդ վերաբերում են ուսումնարանին։—Իսկ այդպիսի գայթակղութիւններ միշտ կը լինեն, քանի որ մեր հասկացող երիտասարդութիւնը փախչում է գիւղերից ու ասպարէզը թողնում զանազան բուլոչնիկ ուսուցիչներին, որոնք միայն ուսումնարանի անունն են կոտրում ժողովրդի աչքում։

Մենք շարունակ լսում ենք զանգատներ չինական դատարանների, հաշտարար դատաւորների, հաշտարար միջնորդների (мировой посредникъ) վերաբերութեամբ.—ստորին ծառայողները 'ի չարը գործ դնելով տէրութեան հաւատարմութիւնը հարստահարում են մեր գիւղական աղքատութիւնը.... Բայց այդ բոլորը բաւական չեն համոզելու գիւղացու—որդի իրաւաբանին գնալու իր գիւղը պաշտպանելու իր հայրենակիցներին ստորին ծառայողների անարդարութիւնների դէմ. մեր իրաւաբանները չը գիտեն, որ իրանց համար գաւառներում գործունէութեան ընդարձակ ասպարէզ կայ։ Մենք լսում ենք անդադար գանգատներ մեր հոգևորականութեան վրա, որ մեր հոգևոր հայրերը ժողովուրդը ագիտութեան խաւարի մէջ են պահում, բայց մեր երիտասարդութեան հասկացող մասը ամենևին չէ մտածում այդ չարիքի առաջն առնել....

Մեր ինտելիգենցիան պէտք է վերջապէս հաշտվի այն մտքի հետ, թէ, այս ուղղութեամբ, այդպէս գնալով մեր գիւղական աղքատութեան դրութիւնը ամենևին ցանկալի մխիթարական դրութեան չի հասնի, այլ աւելի էլ կընկնի....

Գիւղական աղքատութեան մէջ, նրա օգտին գործելու, նրա մտաւորական, նիւթական և բարոյական վիճակը միխիթարական դարձնելու համար պէտք է թողնել կենտրոնները, մեծ քաղաքները, գնալ ժողովրդի մէջ, մօտիկից ծանօթանալ նրա հոգսերի, ցաւերի հետ։—Այն ժամանակ կարելի է յուսալ, որ մեր գիւղական աղքատութիւնը միխիթարական բարօրութեան կը հասնի ամեն կողմից։—

Լմմանուէլ

Շատ հասկանալի է Գամբետտայի ցանկութիւնը իշխանութիւնը խլել այն մարդկերանց ձեռքից, որոնք մեծ վտանգ են պատրաստում Ֆրանսիայի համար, չը միջամտելով եւրոպական գործերին։ Ֆրէյսինէի արտաքին քաղաքականութեան ՀԵՏԱՍԱԿԱՐ լինելը այնքան ակներև է, որ նրանց վրա ուշադրութիւն դարձնելու համար Գալիֆէի նման գեներալների ճառերը բոլորովին աւելորդ են։ Գալիֆէի ճառը այն հեռանկարները կուսակցութիւնը նորից կը սկսի խօսել նրա դիկտատորական ձգտումների մասին այն զմայլանութեամբ, որ այս անգամ կաւելացնի, թէ Գամբետտա առաջուց կամենում է սատանալ գօրքերի համակրութիւնը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԹԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 18 ապրիլի 1882

Կ. Պոլսէն «Արձագանք» շաբաթաթերթի 6-րդ համարի մէջ տպուած թղթակցութիւն մը կը ծանուցանէ թէ, Երուսաղէմայ երկու վարդապետներ այստեղ գալով՝ ամէն վատ միջոցներու կը դիմեն եղեր որպէս զի Եսայի պատրիարքն կասկածելի երեւցնեն թէ ազգի և թէ կառավարութեան առաջ։ Այս լուրն առաջին անգամ կարդալով յիշեալ լրագրի մէջ, որքան որ անհաւատալի ալ չէր, սակայն ասա և անդ տեղեկութիւն ուղեցինք և ստուգեցինք որ յիրաւի այդպիսի մի տարաձայնութիւն տեղի ունեցեր է։ Մեզ կրկնեցին թէ վանքէն եկած երկու հայ վեղարաւորներ փորձ են ըրեր մինչև անգամ «Վաքըթ» անուն թիւրք լրագիրը շահել որպէս զի անոր աջակցութեամբը Երուսաղէմայ պատրիարքէն վրէժնին լուծեն, զայն կասկածելի երեւցնելով, վանքին պարտքերը անտեղի ցոյց տան, նշմարելով որ յանուն Երուսաղէմայ պարտուց եղած հանգանակութիւնը մասնաւոր ազգային միտումներու համար է։

Մեր ստուգածն կատարելապէս կը համապատասխանէ ուրեմն «Արձագանքի» տուած լուրին և այս առթիւ չնորհակալ ենք անոր որ իր մօտ աջակից մը գտանք ազգին մէջ խումբ մը անպատկառ դատճաններն անխնայ երեսն հանելու համար։ Տրուած լուրն ստոյգ է ուրեմն, քանի որ այդ մարդիկը այսքան ժամանակ է չը ժխտեցին զայն. բայց կերևի «Վաքըթ»-ը անոնց ցոյց տուած փաստերը բաւականապէս համոզիչ չէ դտեր, ապա թէ ոչ սկսած կըլլար մինչև հիմայ իր յարձակումները և այդ այնքան աւելի փոյթով՝ որ թիւրք լրագրին գլխաւոր խմբագիրներն հայ էֆէնդիներ են։

Կը ցաւինք միայն որ Երուսաղէմայ պարտուց առթիւ «Մշակի» թղթակիցներուն և «Արևելեան Մամլոյ» գրութիւններն ներկայացուած են «Արձագանքի»-ի մէջ իբր նոյն վարդապետներուն թելադրութեամբը խմբագրուած։ Ոչ «Մշակի» միւս թղթակիցը, և ոչ ալ «Արևելեան Մամլոյ» խմբագրապետն պէտք ունին այս պարագայի մէջ իմ օգնութեան, այսպիսի ձրի ամբաստանութիւն մը ժխտելու համար, բայց նոյնը չէ և ինձ նկատմամբ որ թղթակցութեան մը մէջ Երուսաղէմայ պարտուց վրայ խօսած եմ և զոր հրատարակեց «Մշակ» իր 42-դ համարի մէջ։

Խօսելով այնտեղ մեր ամէն ազգային հաստատութեանց անյաջող վիճակին, ամէն ի զուր վատնուած փողերու մասին, այն յօդուածի մէջ բացորոշ ցոյց էի տուած թէ այդ կացութեան միակ պատճառն էր ամէն ազգային գործիչի անպատասխանատու թողուին կամ կօնտրօլի զրութեան կատարելապէս բացակայութիւնը։ Իբր օրինակ և ապացոյց յիշեր էի Երուսաղէմայ վանքին մատակարարութիւնը, որ սկիզբէն առանց կօնտրօլի մնալով՝ այժմ իր 350,000 բուրլի պարտքովն կը բեռնանայ ազգին վրայ։ Պահանջեր էի որ այս պարտքը հատուցանելէ առաջ՝ ազգն այն կերպ իր հսկողութիւնը այսուհետև ապահովէ, նաև այդ հաստատութեան նկատմամբ, որ այլ ևս ազգային չի ստիպուի այսպիսի զայթակղական հաշիւ մը կարդալու։ Կօնտրօլի անհրաժեշտութեան իբր փաստ բերեր էի Երուսաղէմը, ինչպէս երբեմն ըսեր էի նոյնը Միացեալ ընկերութեանց և Սովետոց մասնաժողովի առթիւ։ Այդ զրութեան ընդհանրանալն այնքան կարևոր պէտք մըն է ինձ համար, որ ազգային ժողովի բեմէն իսկ խստիւ պիտի պահանջեմք զայն, երբ մեր հեռատես ատենապետը զիջանի այս օրերս զմեզ ի ժողով գումարել։

Իսկ այդ Երուսաղէմայ պարտքը գոյութիւն ունի թէ ոչ, ինչ պարագայներ օդներ են անոր գոյանալուն, պէտք է թէ ոչ բարեպաշտ հայուն վճարել այդ ահաղին գումարը, այդ հարցերն յաջուցանել անգամ պատշաճ չէի դատած։ Ուրեմն մեր վէճը լոկ սկզբունքի, նախապատչութեան խնդիր ըլլալով կը զարմանամ որ, չը գիտեմ ինչ կանխակալ կարծեաց դրդմամբ, «Արձագանքի» թղթակիցն կրկներ է Կ. Պոլսոյ մէջ իբր թէ տարածուած զրոյց մը թէ՝ «Մշակի» այստեղի թղթակիցներն ալ Երուսաղէմէն կիցով արտաքսեալ երկու վարդապետներէ թելադրեալ են։ «Արձագանքի» պէս բարեկիրթ և հայ լեզուին լաւ տեղեակ մի թերթէ աւելի զգուշութիւն կը սպասենք բառերու ընտրութեան մասին։ Եթէ պատշաճ դատեցինք Երուսաղէմայ պարտուց խնդիրն մեր ինչ կերպ նկատելուն վրայ հրաւիրել կրկին անոր ուշադրութիւնը՝ պատճառը այն չէ որ զմեզ ջատագովելու անօգուտ փափաք մը զդացինք, այլ այն յուսով որ յիշեալ նորածին շաբաթաթերթը մեզ հետ համամիտ է թէ՝ սկզբանց վրայ վիճելն է այժմ մեզ աւելի կարևորն, քան թէ ձրիապէս ենթադրութիւններ ընելն միմանց շարժառիթներու վրայ, թողլով բուն հարցը մոռացութեան։

Ա՛ռ այժմ այսքան։

Ցանկա-Հայաստանի բարենորոգմանց մասին սովորութիւնը չի կորսուելու համար՝ երբեմն այստեղի թիւրք կամ օտար լրագիրք երևակայական լուրեր կը հրատարակեն և մօտ ժամանակի մէջ հազար բարիք կը խոստանան ոչ միայն Հայաստանի, այդ ամենահեշտ բան է, այլ ընդհանուր ասիական և եւրոպական թիւրք գաւառներուն։ Սովորաբար զդայլ կը կենան պաշտօնական կամ վարձեալ թերթերն մեզ իմացունելու թէ որ գաւառներէն և որ տեսակ բարենորոգումներէն պէտք է սկսեն և որ թուականին։ Այս խիստ պիտանի տեղեկութեանց փոխարէն՝ ամէն ութ օրը անուն մը կը նետեն հրապարակը իբր յուղարկաւելիք արտաքոյ կարգի կօմիսէր յԱնատոլու։ Այսպէսով յիշուեցան հետզհետէ Մուխթար բաշայի, Ահմէդ Վէֆիկ բաշայի և այս վերջին օրերս ալ Սաիդ և Պէյքը բաշայներու անունները և ուրիշներ։ Ենթադրենք պահ մը որ այս բաշաներէն մէկը կամ ուրիշ որ և է անձ ուղևորվի մէկ կողմ, Հայաստան զորօրինակ։ Ինչ պիտի կարող ըլլայ ընել այդ մարդը եթէ ամենէն խելացի և ամենէն արդարակորով անձն անգամ ըլլայ։ Չէ՞ որ իր նախորդներուն պէս պարզ տեղեկագիր մը խմբագրելով պիտի ներկայացնէ Բ. Դրան և որու հետևութիւնը անպատճառ պիտի ըլլայ ինչ որ ամէն այս տեսակ տեղեկագիրներու ճակատագիրն է, այսինքն ոչինչ։

Երբեմն ալ կօմիսէրի տեղ այս ինչ գաւառի ընդհանուր կառավարիչ այս ինչ անձը պիտի յուղարկուի, կըսեն, բարենորոգմանց ձեռնարկելու համար։ Գաւառի մը ընդհանուր կառավարիչը յիրաւի հրաշքներ կարող է գործել, բայց այն պայմանաւ որ ոչ միայն գաղանի և հարկադրիչ հրահանգներ պէտք չէ տայ անոր Բ. Դուռը, այլ և այն մարդը իր պաշտօնին վրայ գոնէ 10 տարի անխախտ մնալու երաշխաւորութիւնը պէտք է ստացած ըլլայ։ Առանց այս կրկին պայմաններուն, որոց պէտք է նաև յաւելցուի ի հարկէ ընտրուած անձին վարչական հմտութիւնն և արդարամտութիւնն, ամէն խոստում ստութիւն է և պարզ աշխարհաւարական խարդախութիւն։

Քանի օրերն և ամիսներն կանցնին՝ այնքան կարծէք թիւրքաց Հայաստանի բարենորոգումնք կը յետաձգին և այսպէս պէտք է ըլլայ, ցորչափ բարձր պաշտօնատարք կը խոստովանին թէ որ և է թիւրք գաւառի մէջ արմատական բարենորոգում ներմուծել չէ կարելի առանց այս գաւառի վարչական ինքնօրինութիւնն հռչակելու։ Արդ՝, կրսեն, որ և է տեսակ ինքնօրինութիւն, վաղ կամ անագան, այն գաւառի անջատումը կը դիւրացնէ, ինչպէս օրինակներ շատ կան, ապա ուրեմն լաւագոյն է այսպէս մնալ, ժամանակ շահել, քան զոտութեամբ հրաժարիլ պետութեան մի որ և իցէ մասին իշխանութենէն։ Ասոր հակառակը թիւրքաց գործել տալն, երբ որ ալ յարմար դատուի, օտար տէրութեանց իրական ճնշումովը միայն կարելի է, այդ ալ եւրոպական այժմեան կացութեանը մէջ մօտ օրերս յուսալ միամտութիւն է։

Հայը այս հանգամանաց մէջ ինչ կարող է ընել եթէ ոչ սպասել և ինքզինքը պատրաստել։

Հայը իր վեց դար գերութեան մէջ գոնէ մէկ առաքինութիւն մը չահած է. համբերութիւնը։ Դա շատ լաւ բան է ամէն խեղճ ու տկար արարածներու համար, միայն թէ մեր համբերութիւնը պէտք չէ որ այլ ևս անխօսուկ ըլլայ։

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Рускій Курьеръ» լրագրի թղթակիցը ապրիլի 6-ին Կ. Պոլսից գրում է հետևեալը։ Մեզ մօտ մինիստրական կրիզիս է։ Ինչպէս ես ձեզ անցեալ շաբաթ հաղորդեցի Սաիդի և Օսմանի մէջ ատելութիւնը վերին աստիճանին հասաւ և հաւիս թէ նրանց մէջ հաշտութիւն լինի։ Անկասկած, սուլթանը առաջին մինիստրին կը հեռացնի, որովհետև առանց Ղազի-Օսմանի չէ կարող մնալ։ Մանաւանդ որ եթէ սուլթանը թոյլ տար պատերազմական մինիստրին հրաժարական տալ, դրանով նա կը վիրաւորէր զօրքին, որի մէջ մեծ հարգաւորութիւն ունի։ Սաիդից յետոյ ժառանգութիւնը, երևի, կը ստանայ մէկ ուրիշ Սաիդ, Արշիպելագոսի կղզիների նահանգապետը, որը նորերումս մեծ վիգիրի աստիճան ստացաւ։

—Լրագիրներին հեռագրում են Լօնդօնից, ապրիլի 18-ից հետևեալը։ Այսօր Լանկաստէրում Իւնգ ազգանունով մէկ երիտասարդ մարդ է կալանաւորված։ Նրան մեղադրում են թագուհուն նամակ գրելում, որի մէջ սպառնում են նրա կեանքին։ Ցանցաւորը բերված է Լօնդօն և ներկայացրած դատարանին։ Նամակի մէջ ասված էր, որ գրողը իրլանդական կաթոլիկ քահանայ է և պահանջում է 2,000 ֆունտ ստէրլինգ, որով 50 բանտարներ կարող էին Ամերիկա գաղթել. հակառակ դէպքում նրանք կը սպանեն թագուհուն։

—«Post» լրագրին Փարիզից հեռագրում են ապրիլի 15-ից, որ գնդապետ Բէկէր Կ. Պոլսից Փարիզ գնաց։ Նրա Կ. Պոլսից հեռանալը բացատրվում է նրանով, որ օսմանեան կառավարութիւնը վերջին ժամանակ հրաժարական է տալի անգլիական ծագումի բոլոր պաշտօնեաներին, նրանց տեղ գերմանացիներին նշանակելով։

—Մադրիդից «Presse» լրագրին հաղորդում են, որ պատգամաւորների ժողովի մեծամասնութեան մի քանի ազդեցութիւն ունեցող անդամները հարց բարձրացրին երդման ձևը փոխելու մասին, որ ամէն մի պատգամաւոր պարտաւոր է երդում տալ պատգամաւորների ժողովը մտնելու ժամանակ։ Զախակողմեան խումբերը, մանաւանդ արմատականները, ցանկանում են, որ երդումը բոլորովին չը լինի, ինչպէս 67—74 թուերի յեղափոխական շրջանումն էր, իսկ պահպանողականները, մեծամասնութեան մէկ մասը և մինիստրութիւնը ցանկանում են երդում տալու ձևը պահպանել, բայց փոփոխելով այնպէս, որ ամէն տեսակ կրօնական և փիլիսոփայական համոզմունքները կարողանան հաշտվել նրա հետ։

—«Repub. Francaise» լրագրին Բարցելօնայից հեռագրում են, որ ժամանակաւորապէս դադարած յուզմունքը պարլամէնտի մէջ առևտրական դաշնագիրը քննադատելու ժամանակ, կրկին նորոգվեցաւ։ Ժողովրդի խմբեր թափառում են գլխաւոր փողոցներում և հաւաքվում են հրապարակներում։ Նկատելի է, որ այդ անձինքների մեծամասնութիւնը կատալօնեան կարմիր գլխարկ ունի ծածկած։

—«Daily News» լրագրին նոյնտեղից հաղորդում են, որ սաստիկ զրգռված են ուսանողները և տեղական զօրանոցներում ապրող զինուորները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երկու դքսուհիներ։ Փարիզի լրագիրները հաղորդում են, որ շուտով Սենայի դատարանում մէկ խայտառակ գանգատ կը քննվի, որ մեծ աղմուկ զցեց ամբողջ Փարիզում։ Դքսուհի դէ-Շոն դատարանի միջնորդութեամբ պահանջեց իր սկսուրից, դքսուհի դը-Շէվրէօզից, որ վերադարձնի իրան իր սեփական մանուկներին իրանց կարողութիւնով։ Դատ սկսողը, Սօֆիա դէ-Շոն, այժմ 23 տարեկան է. նա իշխան Գալիցինի աղջիկն է, որը Ռուսաստանից աքսորված լինելով, Փարիզում շատ աղքատ էր ապրում։ 1874 թուին իշխանուհի Գալիցինա ծանօթացաւ դքսուհի դը-Շէվրէօզի և նրա որդու հետ։ Վերջինը սիրահարվեց գեղեցիկ և խելօք իշխանուհու վրա, և չը նայելով մօր դժգոհութեանը, որ չէր կամենում ընդունել իր տանը աղքատ հարսին, պսակվեց նրա հետ։ Երիտասարդ իշխանուհին այդ կապի մէջ չը գտաւ այն բաղդը, որը ինքն որոնում էր։ Նրա սկեսուրը անսահման իշխանութիւն ունէր իր որդու վրա, և թէպէտ զըրսից նա շատ բարեպաշտ և բարեսիրտ կին էր երևում, բայց ամենախիստ կերպով չարչարում էր իր ջահիլ հարսին։ Սկզբում դուքս դը-Շէվրէօզ իր կնոջ կողմն էր բռնում, բայց վերջը յաղթող հանդիսացան մօր բամբասանքները, որ չէր դադարում հաւատացնել դքսին, ասելով թէ կինդ չէ սիրում և խաբում է քեզ։ Երբ ջահիլ դքսուհին միանգամ հրաժարվեց գնալ իր մարդու հետ Սարլէ ամրոցը, ուր բնակվում էր մայր-դքսուհին, դուքսը, մտրակով խփեց նրա երեսին։ Դրանից յետոյ դուքսը հիւանդացաւ, և նրա կինը գնում էր իր մարդու հետ իրան ատելի այդ ամրոցը։ Այստեղ սարսափելի անցքեր էին պատահում։ Մի անգամ ջահիլ դքսուհին զարթեցաւ երկու աղեղների երգեցողութենից։ Սարսափած այս և այն կողմը նայելով, նա տեսաւ երկու աղեղաներին, որոնք նստած էին իր անկողնի երկու ծայրերին, իսկ նրա առաջ սպառնալի կերպարանքով կանգնած էին իր մարդը և սկեսուրը։ Վերջինը ասեց. «Եթէ դու քեզ մեղաւոր չես համարի և չես ստորագրի այդ թղթերը մենք կը սպանենք քեզ»... «Ստորագրիր, թէ չէ զլուխդ կը պատռեմ», աղաղակեց դուքսը իր սարսափահար կնոջ վրա։ Թշուառ դքսուհին, նստելով անկողնի վրա, ստորագրեց իր անունը հետևեալ յայտարարութեան տակ. «Ներողութիւն եմ խնդրում իմ ամուսնուց... Թողնում եմ իմ դաւակներին.... և հրաժարվում եմ նրանց ունենալուց։» Այդ երկու զոկումենտները դքսուհին ինքն վերցրեց։ Սկեսուրը շատ վատ էր վարվում նրա հետ և վիրաւորում էր երիտասարդ կնոջը թէ առանձնապէս և թէ հասարակութեան մէջ։ Վերջապէս ջահիլ կինը փախաւ իր մօր մօտ։ Վերջը մնաց դուքսը և նրա այրին պահանջում է այժմ, որ վերադարձնեն իրան թէ իր դաւակներին և թէ իր ամուսնուց մնացած ժառանգութիւնը։ Զար դքսուհի դը-Շէվրէօզ, մեղադրում է դքսուհի դէ-Շոնին զրոնկութեան մէջ, հաստատելով, թէ ինքը հանդիսացում էր նրա սիրահարներին նրա ննջարանում։ Ամբողջ Փարիզը լցված ուշադրութեամբ հետևում է այդ պրոցէսին, որ լի է զանազան խայտառակութիւններով։

* * *

Փողի արժողութեան աստիճանաբար փոքրանալը։ Նորերումս Փարիզի գիտութիւնների ակադէմիայում, պ. Ալֆոնէ մէկ գրութիւն կարդաց, որ շատ հետաքրքիր փաստեր է հաղորդում Լուդովիկոս XIII-ի ժամանակ եղած փողերի արժողութեան մասին։ Տարեկան 12,000 ֆրանկ եկամուտ ունենալով կարելի էր աղայի պէս ապրել և դնել 10 հոգի ծառաներ ունենալ։ Այդպիսի գումարը, օրինակ, ծախսում էր Բիշիլիէօի ազգականուհին, որը, իր երկու աղջկերանց հետ միասին, հասարակութեան մէջ իր ունեցած դրութեան կատարելապէս համապատասխանող կեանք էր վարում, և 16 ծառաներ էր պահում։ Ֆէրիշիէր պատմում է, որ իր ծանօթներից մէկը, լոլորը 80,000 ֆրանկ գումար ունենալով միայն, պահում էր կառք, երկու ծառաներ և դանապան։ Ով 10,000 ֆրանկ ունէր, նա արդէն շատ մեծ հարուստ էր համարվում։ Թագաւորի եղբօր, Գաստոնի ռոճիկը վերոյիշեալ գումարից չէր անցնում. այն ժամանակվայ կրկղոսը, Բօգանեան դուքսը, նոյնպէս տարեկան 100,000 ֆրանկ եկամուտից աւելի չունէր։ Մոնմորանսի սպարապետը, Ֆրանսիայի ամենահարուստ ազնուականը, իր աղջկանը միայն 100,000 էկիւ բաժինք տուեց. Հենրիէտտա Մարիա, 1625 թուին պսակվելով անգլիական կարլ 1 թագաւորի հետ, միայն 200,000 էկիւ բաժինք բերեց։ Ցան վարձ նոյնպէս շատ քիչ էին տալիս։ 1662 թուին անգլիական դեսպանը Փարիզում, մէկ ամբողջ մեծ տան վարձ տալիս էր 2000 ֆրանկ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԴՈՒԲԼԻՆ, 26 ապրիլի։ Կավենդիշ և Բուրկ զբօսնում էին։ Նրանց մօտեցաւ մի կառք, որից դուրս թափվեցան չարագործները և հարուածներ հասցրին վզին և կուրծքին։ Զոհերը յամառութեամբ ընդդիմանում էին։ Դիակները այլանդակված են։ Սպանութեան

տեղը արիւնով է ծածկված։ Երեկոյեան սպանութեան լուրը ստանալուց յետոյ մինիստրները խորհուրդ կազմեցին։ Դեռ ոչ ոք կալանաւորված չէ։ Լորդ Կավենդիշ նորերում փոխարինեց Ֆոքսներին։ Նա Մարկիզ Հարտինգտոնի եղբայրն է և ամուսնացած է Գլադստոնի հարազատ քրոջ աղջկայ վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 ապրիլի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 80 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 50 կ., չորրորդ 90 ր. 75 կ., հինգերորդ 90 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր. 75 կ., երկրորդ 212 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 50½ կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր. 5 կ.։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 24,40 պենս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ՏԻԿԻՆ, որ գիտէ ֆրանսերէն լեզու և ուզևորվում է արտասահման, փնտռում է մի ՀԻՒԱՆԴ կնոջ ուղեկցելու, կամ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ խնամելու։—Վարձատրութիւն չէ խնդրում, այլ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ գնացողների հաշուով։ Հասցէն. Գոլովինսկի փողոց, ուսուցիչարան Սավիչի, տուն Թամամշեվի № 6։

1—3

Լոյս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների 81 գրքոյկը Զ. Դիկկենսի „Հարս և Սկեսուր“ թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի, գրքոյկին իբրև յաւելուած տպուած է գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն։

Գինն է 15 կ.

Հասցէն Тифлисъ. Тиграну Назарьянцъ.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՐԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼ

Վէպի այս հատորի մենավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻՆ»։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

9—10

Ապրիլի 15-ից կենտրոնական գրադարանում, որ գտնվում է Արծրունու գալլերէի № № 149 և 150 բացված է հայերէն գրքերի բաժանումը։ Ամսական վճարը մի գրքի համար 30 կ., երկու գրքի համար 50 կ., իսկ երեք գրքի համար 80 կ.։

Գրաւ պէտք է թողնեն 2, 3 կամ 5 ռուբլի, նայած քանի գիրք է ստանում։

Գրադարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 ժ. մինչև երեկոյեան 8 ժամը։

7—10

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ

Որ մայիս ամսի կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով զանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ։

Մանրամասն ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ո՞ւմ և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞ր քան ժամ և այն և այն խնդրում են ցանկացողներին թողնել „Մշակի“ խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցէն։

13—15

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արծրունու գալլերէի № 144 տակավորում է արժան գներով վիեննական Ֆաբրիկայի ամեն տեսակ Մեօբել, նշանգէս բաղնիքի ՄԱՐՄԱՐԻՈՆ քարեր, ՀԱՅԵԼԻՆԵՐԸ և ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ։

29—60

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. գիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 30 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ծըծիչներ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շչէօակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. գիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, արիկօ, ԱԼԲՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑ։

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

Էրնստ Հօֆմանի „ԹՈՒԼԹ ԽԱՂԱՑՈՂԻ ԲԱՂԴԸ“ վերնագրով գրքոյկի հայ թարգմանութիւնը։ Թիֆլիսում ծախվում է „կենտրոնական“ և „Կովկասեան“ գրավաճառանոցում, իսկ Երևանում „Բարեկամ մանկանց“ գրավաճ. պ. Սիմէօնեանցի մօտ։

Գինն է 25 կօպ.

4—5

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւիար և այլն։ Ծախվում են շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բաղկաթոռ մահճակալ 8 ր., ամբողջ ՀԱԳՈՒՍՏ 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, դանակներ և այլն։

3—10

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Մեր տպարանից, հետևեալ մեր թարգմանութիւնը

„ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ՍԿԻՒՌ“

Փոքրիկ պատմութիւն երեխայից համար։ Ամենափոքրիկ գիրքով, և մաքուր տպագրութիւն։

Տպած է Մանուշակի գունով։

Գինն է 10 կ. 10 օր. պակաս չէ ուղարկվում։

Հասցէն՝ Въ Эривань А. С. Гуламирянцъ.

5—5

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուումիվալնիկներ մրամօրների 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու Կուշնարովի գիլզի պապիրոսի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ուլթուներ, Բրիտանկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուսիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչայի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գողանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Апрѣля 1882 года. Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.